ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.01.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-ԷՍ-2018/131

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) քննելով «ԷԴՀՈՎԱ» ՍՊԸ-ի կողմից 26.12.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«ԷԴՀՈՎԱ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«ԷԴՀՈՎԱ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 26.12.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

««Արարատի մարզի Նորամարգի Ագապի Քադաշյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար կազմակերպվել է «ԱՄՆՄԴ-ԳՀԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկա է հանդիսանում սննդամթերքը:

Ի թիվս այլ ընկերությունների Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացվել նաև «ԷԴՀՈՎԱ» ՍՊԸ–ի (այսուհետ՝ Ընկերություն) կողմից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.12.2018թ ժամը 14:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 7-րդ կետով կայացվել է որոշում Ընկերությանը 1-ին

չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու վերաբերյալ, այնուհետ հարցում է կատարվել ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից ներկայացված եզրակացության (այսուհետ՝ Եզրակացություն) համաձայն՝ Ընկերությունը ունեցել է 134,000 ՀՀ դրամի չափով պարտավորություն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.12.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1.2 կետի ա) ենթակետով կայացվել է որոշում Ընկերության կողմից ներկայացված հայտը եզրակացության հիման վրա անբավարար գնահատելու մասին, նույն կետի բ) ենթակետով կայացվել է որոշում Ընկերության հայտը մերժելու մասին:

Վերոնշյալ արձանագրության 2-րդ կետով և 1.2 կետի գ) ենթակետով կայավցել են նաև որոշումներ՝ հանձնաժողովի նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու (մինչև 24.12.2018թ ժամը 14:00) և արձանագրված անհամապատասխանությունները մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկելու վերաբերյալ Ընկերությանը ծանուցում ներկայացնելու մասին:

Ընկերության կողմից արձանագրված անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ գրությունը ներկայացվել է գնահատող հանձնաժողովին համապատասխան ժամկետներում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.12.2018թ ժամը 14:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1.2 կետի բ) երթակետով կայացվել է որոշում Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումը.

Ընկերության հայտը մերժվել է ԱՄՆՄԴ-ԳՀԱՊՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ ունենալու հիմնավորմամբ:

Ընկերության կողմից ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ այդ պարտավորությունները վերաբերում են «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշային վճարներին, որոնց մասին Ընկերությունը հարկային մարմնի կողմից որևէ իրազեկում չի ստացել և այդ տեղեկությունը կարող էր ձեռք

բերել միայն Ընկերության հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությունից:

Ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել նաև, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն սահմանված վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևում «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշային վճարը որպես հարկային մարմի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, նախատեսված չէ:

Ընկերությունը գտնում է, որ պետք է վերականգնվի նրա հետագա մասնակցությունը գնման գործընթացին, քանի որ դրա դադարեցումը պայմանավորված է եղել հարկային մարմի կողմից իրազեկված չլինելու հանգամանքով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձից խնդրում եմ՝

1. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 24.12.2018թ ժամը 14:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1.2 կետի բ) ենթակետով Ընկերության հայտը մերժելու մասին կայացրած որոշումը:

2. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 24.12.2018թ ժամը 14:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2.2 կետով Ա/Ձ Գոռ Աբրահամյանին 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին կայացրած որոշումը:

3. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում Ընկերության հայտը բավարար գնահատելու մասին»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության տնօրեն Գագիկ Անտոնյանը:

2. «Արարատի մարզի Նորամարգի Ագապի Քադաշյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Բողոքներ քննող անձը դիմել է «Արարատի մարզի Նորամարգի Ագապի Քադաշյանի անվան

միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին՝ Բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով, նույն հոդվածով սահմանված ժամկետում Բողոքներ քննող անձին տրամադրել գրավոր դիրքորոշում, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Պատվիրատուն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն չի ապահովել իր լիազորված ներկայացուցչի մասնակցությունը նիստերին:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/131 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «ԷԴՀՈՎԱ» ՍՊԸ-ի կողմից 26.12.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «ԱՄՆՄԴ-ԳՀԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԱՄՆՄԴ-ԳՀԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 14.12.2018թ. նիստի թիվ 2, 21.12.2018թ. նիստի թիվ 3 արձանագրությունները, «ԷԴՀՈՎԱ» ՍՊԸ-ի հայտի պատճենը,

«Արարատի մարզի Նորամարգի Ագապի Քադաշյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԱՄՆՄԴ-ԳՀԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին 14.12.2018թ. մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԷԴՀՈՎԱ» ՍՊԸ-ն՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N2 հավելվածով՝ ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԱՄՆՄԴ-ԳՀԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնանշման գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովը 14.12.2018թ. նիստի թիվ 2 արձանագրության 6-րդ կետով արձանագրել է, որ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով «ԷԴՀՈՎԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը կազմել է 554,268 ՀՀ դրամ:

Նույն Ընթացակարգի 7-րդ կետով Հանձնաժողովը որոշել է 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԷԴՀՈՎԱ» ՍՊԸ-ին, իսկ նույն չափաբաժնի մասով 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել Գոռ Աբրահամյան Ա/Ձ-ին:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 20.12.2018թ. տրամադրված տեղեկատվության համաձայն՝ «ԷԴՀՈՎԱ» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հայտը ներկայացվելու օրվա՝ 14.12.2018թ., դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող՝ 134,000 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

Հանձնաժողովը 21.12.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության 1.2 կետի՝

-ա) ենթակետով որոշել է Ընկերության կողմից ներկայացված հայտը ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության հիման վրա գնահատել անբավարար,

-բ) ենթակետով որոշել է Ընկերության հայտը մերժել,

-գ) ենթակետով որոշել է ծանուցել «ԷԴՀՈՎԱ» ՍՊԸ-ին հայտը մերժելու մասին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընկերությունը սահմանված ժամկետում Հանձնաժողովին է ներկայացրել արձանագրված պարտավորության վերաբերյալ գրությունը:

24.12.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի 2.2 ենթակետով Հանձնաժողովը որոշել է 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել Գոռ Աբրահամյան Ա/Ձ-ին:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստում Ընկերության տնօրենը պնդեց Բողոքով ներկայացված դիրքորոշումն ամբողջությամբ՝ ընդգծելով, որ Ընթացակարգի շրջանակներում ի հայտ եկած՝ «ԷԴՀՈՎԱ» ՍՊԸ-ի հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունը առաջացած է եղել «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարի գծով: Ընկրերության տնօրենը Բողոքներ քննող անձի ուշադրությունը հրավիրեց այն փաստի վրա, որ նման պարտավորության առկայության փաստը մինչ այդ երբևէ չի ներկայացվել ՊԵԿ-ի կողմից և դրա մասին որևէ իրազեկում չի ստացել, և այդ տեղեկությունը կարող էր ձեռք բերել միայն Ընկերության հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությունից:

Ընկերությունը Բողոքներ քննող անձին ներկայացրեց.

- 14.12.2018թ. դրությամբ Ընկերության հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքը, որի համաձայն Ընկերությունը նշված օրվա դրությամբ որևէ ժամկետանց

պարտավորություն չի ունեցել, իսկ վերջինիս միասնական հաշվում առկա գումարը կազմել է 1,156 ՀՀ դրամ:

- Ընկերության կողմից 21.12.2018թ. «Արդշինբանկ» ՓԲԸ-ի միջոցով՝ դրոշմանիշային վճարի գծով պարտավորությունների կատարման նպատակով, ՀՀ ԿԱ ՊԵԿ միասնական հարկային հաշվին փոխանցված 140,000 ՀՀ դրամ գումարի չափով վճարման անդորրագիրը:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 19.12.2018թ. «ԷԴՀՈՎԱ» ՍՊԸ-ին տրված՝ «Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ» տեղեկանքը, որի համաձայն Ընկերությունը 14.12.2018թ. դրությամբ ունեցել է 134,000 ՀՀ դրամի չափով դրոշմանիշային վճարի գծով հարկային պարտավորություն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.
- 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

• 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«Արարատի մարզի Նորամարգի Ագապի Քադաշյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԱՄՆՄԴ-ԳՀԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

• 8.2 կետի համաձայն՝ Հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 8.12 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստն ավարտվելուն հաջորդող առաջին աշխատանքային օրը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է lena_najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով

Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

• 8.14 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 8.12 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝

• 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների

թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել են վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների հետևյալ հարկատեսակները՝ ԱԱՀ, շահութահարկ, եկամտային հարկ, ակցիզային հարկ, շրջանառության հարկ, արտոնագրային հարկ, բնապահպանական հարկ, ոչ ռեզիդենտի շահութահարկ, սոցիալական վճար, պետական տուրք, բնօգտագործման վճար, այլ հարկային եկամուտներ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի արդեն 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը նույնպես նախատեսված չէ:

«ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դրոշմանիշային վճարների պարտավորության գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը որոշում է կայացնում դրոշմանիշային վճար վճարողից (եթե դրոշմանիշային վճարը, սույն օրենքի համաձայն, պետք է կատարվի հարկային գործակալի միջոցով, ապա հարկային գործակալից) ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում դրոշմանիշային վճար վճարողին (հարկային գործակալին):

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրված եզրակացության համաձայն՝ «ԷԴՀՈՎԱ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ /14.12.2018թ./ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն՝ 134,000 ՀՀ դրամի չափով:

- «ԷԴՀՈՎԱ» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունն առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշային վճարների գծով:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարբտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշային վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, նախատեսված չէ:

- 14.12.2018թ. դրությամբ Ընկերության հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքում ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի եզրակացության մեջ արձանագրված՝ դրոշմանիշային վճարի գծով 134,000 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորությունն արտացոլված չի եղել:

- Ընկերությունը հայտը ներկայացնելու օրը ղեկավարվել է հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքում արտացոլված տեղեկատվությամբ, ըստ որի՝ Ընկերությունը նշված օրվա դրությամբ որևէ ժամկետանց պարտավորություն չի ունեցել, և միասնական հաշվում առկա գումարը կազմել է 1,156 ՀՀ դրամ:

- «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դրոշմանիշային վճարների պարտավորության գծով ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ հարկային մարմնի կողմից որևէ ծանուցում Ընկերությունը չի ստացել:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ԷԴՀՈՎԱ» ՍՊԸ-ի գնման գործընթացին հետագա մասնակցության դադարեցումը պայմանավորված է եղել Ընկերության իրազեկված չլինելու հանգամանքով, քանի որ Ընկերությունն արձանագրված հարկային պարտավորության առկայության վերաբերյալ տեղեկությունը կարող էր ձեռք բերել բացառապես Ընկերության՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությունից:

Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ տվյալ դեպքում արձանագրված պարտավորությունը չի կարող դիտարկվել «ԷԴՀՈՎԱ» ՍՊԸ-ի՝ հայտը ներակայացնելու օրվա դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

1. «ԷԴՀՈՎԱ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 09.11.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել՝

- 24.12.2018թ ժամը 14:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1.2 կետի «բ» ենթակետով Ընկերության հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնելու մասին համապատասխան որոշում:
- 24.12.2018թ ժամը 14:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2.2 կետով Ա/Ձ Գոռ Աբրահամյանին Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին որոշումը դադարեցնելու մասին համապատասխան որոշում:
- «ԷԴՀՈՎԱ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ